Դարույր Սևակ

Հանրապետության հասակակիցները

Սովետական Հայաստանի

30-ամյակի առթիվ

I

Բեղուն չէր այն տարին մեր սեգ լեռնաշխարհում.
Վերից մի կապարե երկինք էր ծանրացել,
Արյունը՝ ջուր դարձել, ջուրը՝ դարձել արյուն,
Մոր սրտի պես փխրուն հողն էր պղնձացել:
Խաղողի վազն անթաղ ինքն իրեն էր սգում՝
Իր ավշային զուլալ արցունքները կոպին,
Ծարավ շրթունքի պես մեր հողն էր ճաքճքում՝
Կարոտ հորովելին, կարոտ արծաթ խոփին:
Բարբաջանքի սովոր ջրաղացը ձորում
Առեղծվածի նման համրացել էր կրկին.
Աղուն բերող սայլերն անուշ չէին ճռռում,
Եվ ալյուրի փոշին մեղմորեն չէր թառում
Չարքաշ շինականի թավ մորուքին:
Բեղուն չէր այն տարին: Տնօրինեքին շրջող
Տերտերի պես սովը բախում ամեն դարբաս
Ու կյանքը դարձնում էր անհունորե՛ն տանջող,
Անհունորե՛ն երկար անլուծելի մի պաս:
Մոլեգնում էր սովը ու ժանտախտը դեղին,

Ու Մահն էր քրքրջում անողորմ ու դաժան,
Եվ ոչ լեգենդական այդ ժանտախտի պահին,
Լպիրշ քրքրջոցով ձայնակցելով մահին՝
Խրախճանք էր սարքել մի ազգադավ խուժան...
Բեղուն չէր այդ տարին: Օրոցքները գյուղի
Քիչ նորածին տեսան օճորքի տակ մթար.
Բաժակներում չեռաց աչքալույսի օղին
Եվ հազվադեպ երգվեց. «Նանի՛կ արա, մատա՛ղ»...

II

Բեղուն չէր այն տարին սուրբ արգանդը հողի,
Եվ հազվադեպ հնչեց կնունքի երգ ու տաղ,
Բայց ժամանակն ուրիշ ծնունդով էր հղի
Եվ հարկի տակ ամեն խավարամած հյուղի
Մի նոր արշալույս էր հասունանում դանդաղ:
Եվ նա ծնվեց՝ ինչպես արշալույսն է ծագում.
Մեռնող լեռնաշխարհը վերածնվեց կրկին,
Երբ Նևայի նման ալեկոծվեց Զանգուն,
Մասիսն արձագանքեց «Ավրորայի» զարկին...
Մեր հեքիաթի նման՝ անմահական պարտեզ,
Դրախտավայր դարձավ մեր չորացած այգին:
Մի նոր գեղեցկությամբ փթթեց այնպես, կարծես
Հրաշք երգն էր հնչել մեր Հազարան հավքի:
Աչքի նման զուլալ՝ նորից հոսեց առուն,
Հորովելը ծորաց մեր արտերում բերրի,
Եվ հավիտյան փրկված մեր սեգ լեռնաշխարհում
Հնչեց զվարթ ճիչն ու կանչը մանուկների:

III

Իմ երկրի հետ մեկտեղ՝ նրանք արդեն հիմա
Բոլորել են իրենց երեք տասնյակ տարին:
Հարցաթերթիկ պետք չէ նրանց կյանքի համար,

Նրանց կյանքը կյանքն է իմ նոր Հայաստանի:
Մեծացել են նրանք՝ մայր ու մանուկ մեկտեղ,
Մեկը մեկով՝ հպարտ, մեկը մեկով՝ կանգուն:
Նրանց ձեռքի, մտքի հետքը հրաշագեղ,
Լի անցյալը նրանց և ապագան շքեղ
Երևում է հիմա ամենուրեք կյանքում:
Մեր Սևանյան Զանգուն լույսի ծով է դարձել
Նախ և առաջ նրանց բազկի երակներում.
Նրանց երազներն են դարձել նոր ոճ, նոր ձև
Եվ վեհացել մեր լայն հրապարակներում:
Վերածվում գինու չգալարվող բոցի
Նաև նրանց ափի մարմանդ ջերմությունով.
Նրանց լույս քրտինքն է, որ փոխարկվում հացի,
Վերածվում է գինու չգալարվող բոցի
Եվ մեր հոգին լցնում կայտառ արբեցումով:
Ուր էլ լինեն նրանք՝ գործարանո՛ւմ, հանքո՛ւմ,
Եվ բանաստե՛ղծ լինեն, թե գիտնակա՞ն ջահել,
Նույն մարտիկն են նրանք մեր փոթորկոտ կյանքում,
Նույն մարտիկն են նրանք, ինչ երեկ են եղել...
Չէ՞ որ նրանք միայն չեն կառուցել շենքեր
Ու բարիքներ քամել հողից ու երկաթից,
Այլև հողագնդի ապագան են փրկել
Բարբարոսի դաժան ու արյունոտ թաթից:
Չէ՞ որ նրանք, իբրև ազատության զավակ,
Զինված նախ խոր սիրով, հետո միայն՝ զենքո՛վ,
Թշնամու դեմ ելան խիզախ ու անվարան
Եվ ուր հասան կռվով՝ ազատությո՛ւն տարան
Իրենց զինվորական շինելների ներքո...
*
Ճերմակ մազերին է փառքը սիրում նստել,

Իսկ այս սերունդն իրոք արժանի է փառքի:
Դրա համար գուցե նրանց քունքերն արդեն
Անժամանա՞կ այնպես՝ ճերմակել են կարգին:

26.XI.1950թ.
Երևան